Ալեքսանդր Շիրվանզադե

Նամակ Դավիթ Անանունին 2

Մեծարգո պ. Դ. Անանուն

Ստացա Ձեր պատվիրյալ նամակը:

Նախ կարող եմ ապահովել Ձեզ, որ Ձեր խնդիրը պ. Տեր-Աստվածատրյանի մասին կկատարվի: Արդեն խոստումն ունեմ ստացած:

Գալով իմ գործին, բարի եղեք հայտնելու «Գործի» հարգելի խմբագրությանը, որ ես բացեիբաց հրաժարվում եմ նրա որոշած պայմաններով աշխատակցելու: Սովորաբար իմ աշխատակցելու պայմաններն ես ինքս եմ որոշում և աշխատակցում եմ միայն այն դեպքում, երբ որոշումս ընդունվում է լիովին:

Ինչ վերաբերում է Ձեր՝ «Խմբագրությունը իրեն է վերապահում գրական գործերի ընտրության իրավունքը» դարձվածին, պատիվ ունեմ «Գործի» խմբագրությանը հայտնելու, թե այդ տեսակ դարձվածներ ինձ համար անհասկանալի են: Այդ տեսակ իրավունք ես ոչ ոքի չեմ տվել երբեք և չեմ կարող տալ . . .

Ցավալի է, որ «Գործն» ևս իր նախորդների պես այդպիսի նյութական ողորմելի պայմաններում է լույս տեսնում . . .

Հարգանքով՝ Շիրվանզադե